պետը արձակումէ իւր մանկական ուսումնարանը, այնուհետև նա գիւղի գիւղատնտեսն է։ Նա հերթով կը մասնակցի ամեն մէկի վարին, հունձին, կալին, և այլն. աշխատումէ նորանց հետ ինչպէս նոցա ընտանեաց որդին։ Ճաշումէ միասին ընտանիքի աղ ու հացը։ Նա ցոյց է տալիս աւելի դիւրին արդիւնաւոր ձևեր, խորհուրդներ հողը պարարտացնելու համար, դեռ նոր անծանօթ սերմեր ցանելու համար, ծառեր տնկելու համար, որքան օգուտ են տալիս ծառատունկները, անտառը երկրագործական նոր գործիքներ ունենալու համար. գիւղի մաքրութիւնը, տների կարգով և առողջապահական կանոններով շինուածքը և այլն։

Երբ կը պատահեն հասարակական դժբախտութիւններ, ինչպէս մորեխ, աւազակների յարձակումն, վարժապետը առաջինն է, որ ժողովրդի գլուխը անցած, առաջնորդումէ նորանց հասարակական թշնամու դէմ*)։

Այդպիսի վարժապետին ամենքը կը հետեւեն։

Այդպիսի վարժապետների միատեսակ ուղղու-

---

*) Ք ա ն օ թ. Պ. Վարդան Եղիազարեան. 1889 թ. Բանանց գիւղի ուսուցիչ, առաջինն եղաւ իւր աշակերտների հետ մորեխների դէմ դուրս եկող։ Բոլոր գիւղացիք հետեւեցին նորան եւ արտերի թշնամուն ոչնչացրին։